

Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

ԶՈՐԵՔԵՆԱԳՅԻ
5 ՍԵՊՏԵՄԵՐԻ 2012թ. • № 23 (264)

www.syuniacyerkir.am

Ա՛խ, պատմությունն
այս այնքան,
այնքան է ծանոթ...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՀԱՍՏԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑԸ

Ի՞նչ է կատարվել Կապանում օգոստոսի 29-ի լույս 30-ի գիշերը

Արժանապատիվ կապանցիները պահանջում են վերադարձնել քաղաքայետ ընտրելու իրենց սահմանադրական իրավունքը եւ պատասխանել հանրության մեջ շրջանառվող ու ամենատարբեր ասեկոսեների տեղիք տվող հարցերին:

Ի՞նչ է կատարվել Արտուր Աթայանի բնակարանում օգոստոսի 29-ի լույս 30-ի գիշերը:

Ինչո՞ւ Արտուր Աթայանն այդ մասին հանգամանակից հաղորդումով հանդես չի գալիս:

Ինչո՞ւ չեն հրապարակվում օգոստոսի 30-ի նախօրյակին Կապանում անցկացված սոցիալ-քուեմների արդյունքները (ըստ շրջանառվող ասեկոսեների՝ Արտուր Աթայանն ինքնաբացարկի նախօրյակին վայելել է կապանցի ընտրողների մոտ 80% -ի համակրանքը):

Ինչո՞ւ ԳՅԳ գերագույն մարմինը տեղի ունեցածի վերաբերյալ հայտարարությամբ հանդես չի գալիս եւ հրապարակավ չի պաշտպանում Արտուր Աթայանին (այդ կապակցությամբ հանրության մեջ շրջանառվում է երկու կարծիք՝ ա) ԳՅԳ-ն Արտուր Աթայանին պատժում է ս.թ. մայիսի 6-ի Աժ ընտրությունների թիվ 38 ընտրատարածքում պատգամավորության թեկնածուներից Մաքսիմի տղային պաշտպանելու համար, բ) ԳՅԳ-ն չի ուզում Արտուր Աթայանի համար հարաբերություններն էլ ավելի վատացնել իշխող կուսակցության հետ):

Ինչո՞ւ ԳՅԳ գերագույն մարմինը Կապանում տեղի ունեցածն իր իսկ նախաձեռնությամբ չի



Լուսավորող՝ Սելիք Բարդադարյանի

տեղափոխում իրավական հարթություն:

Ինչո՞ւ ԳՅԳ կենտրոնական ընտրական հանձնաժողովը չեղյալ չի հայտարարում սեպտեմբերի 9-ին Կապանում նշանակված ՏԻՄ ընտրությունները եւ նոր ընտրություններ նշանակում:

չէ՞ որ տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում սեպտեմբերի 9-ի ընտրություններն այլեւս (որքան էլ կանենանք) լեգիտիմ չեն կարող համարվել:

Շարունակությունը՝ էջ 4

ՍՈՒՐԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ. «Թող Արտուր Աթայանն ազնվորեն պատմի, թե ինչու է հրաժարվել ընտրապայքարից»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՍՏԱՐԻՆ

Կապանի գործող քաղաքապետ, համայնքի ղեկավարի թեկնածու Արտուր Աթայանի ինքնաբացարկը, որ տեղի ունեցավ օգոստոսի 30-ին, նոր իրավիճակ ստեղծեց Կապանում՝ հասարակությունն ակնհայտորեն բաժանելով երկու մասի: Ավելին՝ տարաբնույթ ասեկոսեներ, առեղծվածներ պարունակող զրույցներ, ենթատեքստերով հայտարարություններ, անբացատրելի երեւույթներ... Բազմաթիվ հարցերից մեկը, եթե ոչ զվխավորը, առնչվում է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի անվանը, ում եւ սեպտեմբերի 3-ին հրավիրեցինք հարցազրույցի:

— Պարոն Խաչատրյան, օգոստոսի 30-ին ինքնաբացարկի դիմում տվեց Կապանի քաղաքապետի թեկնածու Արտուր Աթայանը, ինչից հետո բազմաթիվ ասեկոսեներ են շրջանառվում ինքնաբացարկի պատճառների մասին: Եվ Արտուր Աթայանի, եւ ԳՅԳ «Արամ Մանուկյան» կոմիտեի հայտարարության մեջ ուղղակի ակնարկ կա, որ տեղի ունեցածը շանտաժի, ահաբեկումների արդյունք է: «Արամ Մանուկյան» կոմիտեի հայտարարության մեջ, մի քանի հոգու հետ մեկտեղ, ընդգծված է նաեւ Ձեր գործունեությունը:

— ԳՅԳ Կապանի կառույցը, նաեւ մարզային խորհուրդը Կապանի քաղաքապետի թեկնածու են առաջադրել Աշոտ Հայրապետյանին: Ես, որպես կուսակցության մարզային խորհրդի նախագահ, պայքարել ու պայքարում եմ մեր թեկնածուի հաղթանակի համար, ինչը ոչ մի պարագայում անբնական չի կարող համարվել: Եվ աշխատել եմ բացառապես թույլատրելի մեթոդներով՝ բոլորի աչքի առջև: Իսկ իմ հասցեին ոմանց կողմից հնչող քննադատությունները... Դուք չե՞ք տեսնում, որ դրանք մերկապարանոց, կրկնվող փաստերից զուրկ խոսքեր են: Վերջին շրջանում երկու անգամ զրուցել եմ Արտուր Աթայանի հետ եւ անկեղծորեն հայտնել մեր կուսակցության դիրքորոշումը: Ինքն էլ հայտարարել է, որ շարունակելու է ընտրապայքարը մինչեւ վերջ, ինչը



Նորմալ եմ համարել: Իսկ թե ինչ հանգամանքների արդյունքում է օգոստոսի 30-ին ինքնաբացարկությունը՝ էջ 2

Արտուր Աթայանի հայտարարությունը

Սիրելի կապանցիներ, սեպտեմբերի 9-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրվել էի որպես Կապանի քաղաքապետի թեկնածու: Համոզված էի, որ իմ անցած չորս տարիների գործունեությունը, սրտացավ վերաբերմունքը համայնքի ու նրա յուրաքանչյուր բնակչի հանդեպ ինձ թույլ են տալիս վերընտրվել եւ առաջիկա չորս տարիներին շարունակել իմ ծրագրերի իրագործումը:

Ես կարծում էի, թե կլինեն քաղաքակիրթ ընտրություններ, եւ բոլոր թեկնածուներին հնարավորություն կընձեռնվի օրենքով սահմանված կարգով կազմակերպել ընտրական գործընթացը:

Սակայն օրեցօր մարզկենտրոնում շիկանում է մթնոլորտը, ու կապանցու քվեին արժանանալու համար կիրառվում են անընդունելի մեթոդներ: Իմ կողքին կանգնած մարդիկ ենթարկվում են հոգեբանական, ֆինանսական ճնշումների:

Ինձ համար քաղաքապետի աթոռը ինքնամապատկ չէ, ու ես չեմ կարող մնան ծանր բեռով շարունակել ընտրապայքարն ու վտանգի տակ դնել մարզկենտրոնի բարոյահոգեբանական մթնոլորտն ու միջանձնային հարաբերությունները:

Ես չեմ ուզում, որ իմ պատճառով սուժեմ իմ ընկերներն ու համախոհները:

Ես չեմ կարող թույլ տալ, որ իմ ծննդավայրում հաստատվեն թշնամանքն ու դավաճանությունը: Համոզված եմ, որ հազարավոր կապանցիներ համամիտ են ինձ հետ ու չեն մեղադրի ինձ:

Ես ուզում եմ հավատալ, որ այս օրերին հնչող հայտարարությունները, թե մեկ տարի հետո մենք ունենալու ենք անճանաչելիորեն բարեփոխված Կապան, իրականություն կդառնան: Ու եթե դրան խոչընդոտում է միայն իմ կուսակցական պատկանելությունը, ապա ես նպատակահարմար եմ գտնում զիջել իմ տեղը:

Հանուն Կապանի եւ հանուն կապանցու ես հրաժարվում եմ ընտրապայքարից:

30 օգոստոսի 2012թ.

ԳՅԳ Կապանի «Արամ Մանուկյան» կոմիտեի հայտարարությունը

Տեղական ընտրությունների կապանյան ընթացքը ցույց է տալիս, որ այն հեռու է ընտրություն կոչվելուց: Մրցապայքարի հենց սկզբից պարզ դարձավ, որ իշխանությունը խնդիր է դրել ամեն գնով փոխել մարզկենտրոնի քաղաքապետին՝ այդ ճանապարհին կանգ չառնելով որեւէ միջոցի առջև: Սյունիքի մարզպետը, Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենը, ուժային կառույցների ղեկավարները, իշխանության այլ ներկայացուցիչներ ահաբեկման, վախի, շանտաժի մեթոդներ էին կիրառում իրենց ենթակա հիմնարկների աշխատակիցների, գործարարների նկատմամբ:

Կապանի գործող քաղաքապետը, ով ինչպես այս, այնպես էլ նախորդ անգամ մրցապայքարի էր ելել ինքնաբացարկությամբ՝ էջ 2

ԿԱՊԱՆՈՒՄ ԱՆՀԱՆԳԻՍ Է



Կապանի ավագանու անդամի թեկնածու Գագիկ Ղահրամանյանի հայտարարությունը

Վերջին օրերի զարգացումներն ինձ ստիպում են Ձեր առջև հանդես գալ ոչ թե որպես Կապանի ավագանու անդամի թեկնածու, այլ որպես Կապանում տիրող մթնոլորտով մտահոգ մարդ: Ես հպարտ եմ իմ կապանցի լինելու փաստով, հպարտ եմ Կապանի պատմությամբ, անցյալով: Իմ ընկերների, համախոհների հետ միասին չեմ կարող հանդուրժել այն վիճակը, որ առկա է այսօր: Վերջին տարիներին հատկապես, ընտրություն կոչվող միջոցառումների ժամանակ տեղական իշխանությունների հետևողական ջանքերով ի հայտ են գալիս այնպիսի այլաճակ երեւույթներ, ստեղծվում են այնպիսի անմարդկային իրավիճակներ, որ լռելն արդեն անհնար է, իմ կարծիքով՝ վախկոտություն է դավաճանություն: Ստեղծվել է այնպիսի մի մթնոլորտ, երբ հարեւանը հարեւանի, բարեկամը բարեկամի, ընկերն ընկերոջ նկատմամբ կասկածանքով է թշնամանքով է վերաբերում: Բոլոր համամարդկային արժեքները խեղաթյուրված են, արժանապատվությունը, հարգանքը, պատիվը, քաղաքացու ընտրելու իրավունքը ոտնակոխ են արված: Առաջին պլան են մղված ստրկական թմամբը, ոչխարային հնազանդությունը, քաղաքական կուրտիզանությունը: Այս իշխանությունն ընտրության մեկ հնարավորություն է տալիս Կապանին՝ ստրկանալ կամ հեռանալ: Եվ հպարտ կապանցիներ հեռացել ու հեռանում է: Հեռանում է ոչ այնքան դժվար ապրելակերպից, այլև արդարության պակասից, հեռանալի բացակայությունից: Հեռանում է, որովհետև անկախություն նվաճած է պատերազմում հաղթած կապանցի չի կարող ստրուկ լինել իր սեփական հայրենիքում: Արտագաղթը հասել է արդեն չափերի, որը վտանգավոր է պատերազմը չավարտած երկրի համար, որը չի գիտակցվում միմյան անձնական

շահով առաջնորդվող եւ հայրենիքը բիզնես-տարածք դիտարկող իշխանությունների կողմից: Պիտի դադարեցնել արտագաղթը, ու պիտի հեռանան ապաշնորհ եւ ապագային իշխանավորները: Եվ առաջին հերթին պիտի հեռանա Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը՝ որպես այս իրավիճակի եւ մթնոլորտի ամենամեծ պատասխանատու ու մեղավոր: Մենք նամակ ենք պատրաստել՝ ուղղված ՀՀ նախագահին՝ Սյունիքի մարզպետին պաշտոնազրկման պահանջով:

Սիրելի՛ հայրենակիցներ, այսպես ապրել այլևս հնարավոր չէ, եկեք վերականգնենք մեր գեղեցիկ ու անմեղա Կապանի դիմագիծը, իր քաղաքում ազատ ու արժանապատիվ ապրելու կապանցու իրավունքը: Կապանը մերն է եւ հայրենիք է՝ ազատ, անկախ եւ միացյալ հայրենիքի մի մաս, ոչ թե անհայրենիք իշխանավորների սեփականաշնորհված տարածք: Մենք ենք այս քաղաքի տերը եւ այլևս չենք հանդուրժելու մեծամտությամբ տառապող իշխանավորների սանձարձակությունը եւ լստիությունը: Մենք՝ Կապանի ներկայով եւ ապագայով մտահոգ կապանցիներս, նախաձեռնել ենք քաղաքացիական շարժում, որը կոչվում է՝ «Կապանը կապանցիներին է»: Եվ կոչ ենք անում բոլոր կապանցիներին՝ միանալ այդ շարժմանը: Մեր շարժումը քաղաքացիական է, որին կարող է անդամակցել ցանկացած ոք՝ անկախ կուսակցական պատկանելությունից, սեռից, տարիքից եւ ծննդյան վայրից: Մենք կապանցի ենք համարում բոլոր նրանց, ովքեր ապրում են Կապանում, եւ նշանակություն չունի, թե որտեղ են նրանք ծնվել՝ Բաքվում, Կիրովաբադում, Սունգայիթում, Քաջարանում, Սիսիանում, Գորիսում կամ մեկ ուրիշ վայրում: Այս իրավիճակը շտկելու բացառիկ հնարավորություն կա, դրա համար ուզում են

կոչով դիմել քաղաքապետի միակ թեկնածու Աշոտ Հայրապետյանին: Հարգելի պարոն Հայրապետյան, եթե Դուք հաղթեք արդար մրցակցային ընտրության պայմաններում, ես առաջիններից մեկը կշնորհավորեի Ձեզ: Սա անկեղծ եմ ասում: Բայց հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ Դուք մնացիք միակ թեկնածու: Հորդորում եմ Ձեզ՝ ինքնաբացարկի դիմում գրել եւ հրաժարվել ընտրություն կոչվող այս ֆարսին մասնակցելուց: Հավատացեք, Ձեր այս քայլն ավելի զնախադեմ է մեծարանքի արժանի կլինի, քան իշխանության կողմից քաղաքապետի պաշտոնին նշանակվելը: Ես հուսով եմ, որ Դուք այդպես էլ կվարվեք, հակառակ դեպքում, մենք կապանցիներին կոչ ենք անում զնալ քվեարկության եւ դեմ քվեարկել Ձեզ: Մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի իշխանությունների այս ներկայացումը տապալվի:

Հարգելի՛ կապանցիներ, ես առաջադրվել եմ Կապանի ավագանու թեկնածու եւ ցուցակում 28-րդն եմ: Բայց եթե պարոն Հայրապետյանը կատարի կապանցուն վայել արժանապատիվ քայլ եւ ինքնաբացարկի դիմում գրի, ես խոստանում եմ նույնպես դիմում գրել եւ կոչ կանեմ ավագանու անդամի բոլոր թեկնածուներին եւս, որ նրանք նույնպես ինքնաբացարկի դիմում գրեն: Եթե դա տեղի չունենա, ես կայաքարեն ավագանու անդամ դառնալու համար եւ խոստանում եմ պաշտպանել հանրության շահը, կապանցու արժանապատվությունը:

Հարգելի՛ կապանցիներ, մեր այս քաղաքացիական նախաձեռնությունը՝ «Կապանը կապանցիներին է» նոր թափ է հավաքում: Առաջիկայում համաքաղաքային հանրահավաք կանցկացնենք, որի տեղի եւ ժամի մասին Ձեզ լրացուցիչ կտեղեկացնենք:

ՀՀԴ Կապանի «Արամ Մանուկյան» կոմիտեի հայտարարությունը

Սկիզբը՝ էջ 1

Ուղադրման եղանակով, ցանկություն եր հայտնել վերընտրվել: Արթուր Աթայանին պաշտպանելու պատրաստակամություն էին հայտնել մի շարք քաղաքական եւ հասարակական կազմակերպություններ, այդ թվում ՀՀԴ Կապանի կոմիտեն: Մեզ համար անընդունելի է տեղական ընտրության կուսակցականացումը՝ հաշվի առնելով, որ հատկապես փոքր քաղաքներում կրթերի շիկացումը հանգեցնում է ակնհայտ թշնամանքի, 1937թ. հիշեցնող մթնոլորտի:



Ելնելով Կապանում ստեղծված վիճակից՝ ՀՀԴ Կապանի «Արամ Մանուկյան» կոմիտեն դիմում է հանրապետության ղեկավարությանը՝ պահանջելով վերջ տալ ընտրություն կոչվող ներկայացմանը: Առաջարկում ենք անվավեր ճանաչել այս ընտրությունը, պատժել բոլոր այն պաշտոնյա-պատասխանատուներին, ում ջանքերով հերթական կոչված ընտրությունը վերածվեց ֆարսի:

Նախագահական ընտրությունից առաջ մասնատիպ ՏԻՄ ընտրությունները մտահոգիչ են: Պահանջում ենք քաղաքական եւ իրավական գնահատական տալ կատարվածին: Եթե «ընտրություն» կոչված այս ներկայացումն այնուամենայնիվ կայանա, կապանցիներին կոչ ենք անում բոլորով եւ մասնակից չդառնալ այդ խայտառակությանը:

30 օգոստոսի 2012թ.

Կապանի քաղաքապետի ՀՀԿ-ական թեկնածու Աշոտ Հայրապետյանի ընտրական շտաբի հայտարարությունը



Կապանի քաղաքապետի այլևս նախկին թեկնածու, ՀՀԴ անդամ Արտուր Աթայանի ինքնաբացարկի դրդապատճառները, որքան էլ անհասկանալի լինեն, էական չեն մեզ համար: Սակայն ակնհայտ է, որ թեկնածուի կողմից դրան հաջորդած հայտարարությունները հնչում են որպես արդարացում իր պարտության: Այդ հայտարարությունները ճշմարտության տարրեր չեն պարունակում, դրանք ամբողջովին խեղաթյուրում են այն իրական պատկերը, որ այսօր կա նախընտրական Կապանում: Մասնավորապես, զավեշտալի է հնչել ՀՀԴ Կապանի «Արամ Մանուկյան» կոմիտեի հայտարարությունը, քանի որ այդ քաղաքական ուժը, չզիտես ինչու, ընտրապայքարի ժամանակ երբեք հանդես չի եկել թեկնածուի սատարելու մասին հայտարարությամբ: Այդ կուսակցությունը նաեւ չի առաջադրել ՀՀԴ անդամ Արտուր Աթայանին՝ որպես քաղաքապետի թեկնածու: Իսկ այսօր, մի խումբ մարդկանց մեղ անձնական շահերից ելնելով, ոչ միայն հանդես է գալիս իբրեւ կեղծ պաշտպան Արտուր Աթայանի, այլև կոչ է անում բնակիչներին՝ բոլորով ընտրությունները:

Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում ենք, որ կապանցիների շրջանում ընտրությունների հետ կապված որեւէ լարվածություն չկա ու չի կարող լինել: Բացառվում են նաեւ որեւէ մեկի նկատմամբ որեւէ տեսակի ճնշման

կիրառման դեպքերը, քանի որ առայսօր այդ մասին իրավապահները որեւէ ահազանգ չեն ստացել:

Հայտարարություններում հնչեցվող պահանջներն անօրինական են, դրանք չեն բխում գործող ընտրական օրենսգրքից ու ՀՀ սահմանադրության դրույթներից: Ավելին, այդ պահանջները միտված են Կապանում ստեղծելու անառողջ մթնոլորտ՝ հանուն մի խումբ մարդկանց շահերի: Հավաստիացնում ենք, որ այս ընտրությունները Կապանում մեր կողմից կանցկացվեն արդար ու թափանցիկ՝ օրենքով նախատեսված կարգով: Փորձը ցույց է տալիս, որ ընտրություններ բոլորով կան անձնական նպատակով քաղաքացիական շարժում սկսելն ամենեւին էլ չեն նպաստում առաջընթացի ապահովմանը:

Ուրեմն՝ հանուն Կապանի եւ կապանցու կոչ ենք անում բոլորին՝ միահամուռ մասնակցել առաջիկա ՏԻՄ ընտրություններին: Մենք շարունակում ենք մեր նախընտրական քարոզարշավը եւ ընտրապայքարն ավարտելու ենք հաղթանակով:

Հավաստիացնում ենք, որ մեկ տարի հետո, իրոք, ունենալու ենք անճանաչելիորեն բարեփոխված Կապան: Ընտրված քաղաքապետը, անկախ ամեն ինչից, լինելու է բոլոր կապանցիներին եւ նրանց հետ միասին ստանձնելու է քաղաքի խնդիրների լուծման ծանր ու պատասխանատու գործը:

2 սեպտեմբեր 2012թ.

ՀՈԳԵՎՈՐԻ ԵՒ ԲԻԶՆԵՍԻ ԱՐԱՆՔՈՒՄ



Լուսավորմանը՝ Սեյի Քարտաարքայանի

«Տաթեւի վերածնունդ» ծրագրի իրագործմանը սպասելիս

Անշուշտ, «Տաթեւի թեւեր» ճոպանուղին նոր երեւոյթ է Գորիսի փարածքի փրկարարական կյանքում: Եվ արդէն իսկ կարելի է արձանագրել, որ այն փաստայնակ հազարավոր (փարեկան) զբոսաշրջիկի ուշադրություն է սեւեռել իր վրա: Զբոսաշրջիկների այսպիսի հոսք (անզամ խորհրդային փարիներին, երբ փորձաքանակ կազմակերպություններն ակտիվ գործում էին) Գորիսը չէր փոխել:

Ճոպանուղու գործունեությունը դրական անդրադարձ է ունեցել հատկապես հյուրանոցային տնտեսության զարգացման վրա: Այսօր արդէն ոչ միայն Գորիսում, այլև Գալիձորում, Տաթեւում կարելի է տեսնել մի շարք նորաբաց հյուրանոցներ, իջեւանատներ (մի մասը՝ վերափոխված, հարմարեցված բնակարաններ են)՝ ժամանակակից պայմաններով: Որոշակի ակտիվություն է նկատվում սպասարկման մյուս ոլորտներում (Շինուհայր-Տաթեւ ենթաշրջանում)՝ առևտրի սրահներ, մանրածախ առևտրի կրպակներ կամ «սեղանիկներ», ճաշարան-ռեստորաններ եւ ամենատարբեր ծառայություններ (դրանց մի մասը մեկ-երկու տարի առաջ մեր պատկերացումներում անգամ տեղ չէր կարող գտնել): Իսկ ավտոգազակայանների ու բենզակայանների ծանրաբեռնված աշխատանքը, ճոպանուղու Գալիձորի կայարանում (հատկապես շաբաթ-կիրակի օրերին) մարդկային անվերջանալի հերթը հավելյալ անգամ ցույց են տալիս, թե ինչպիսի եռուզեռ կա ճոպանուղու շուրջը: Երբեք, իհարկե, կունենանք պաշտոնական վիճակագրություն եւ ավելի ստույգ կխոսենք ճոպանուղու սոցիալ-տնտեսական եւ մշակութային նշանակության մասին, բայց հիմա արդէն կարող ենք ասել, որ «Տաթեւի թեւերից» հետո ծրագրի ամենամեծ

շահառուներից է Տաթեւի վանքի հոգեւոր ծառայությունը, որի աշխատանքը, ինչպես մեր բոլոր հոգեւոր հաստատություններում (ցավոք), չափվում է նախնաւառջ մոմավաճառությամբ (թեւե մոմավաճառությունը եւ վանական համալիր այցելած հավատավորների թվաքանակը միմյանց հետ չչափվող հասկացություններ են): Ինչպես պատմում են վանքի սպասավորներից ոմանք՝ Տաթեւ այցելողների մի զգալի մասն այդպես էլ չի իմանում, թե ուր է եկել եւ ինչ ասել է Տաթեւի վանք: Այդ ամենով հանդերձ՝ ճոպանուղին սպասված ազդեցությունը դեռեւս չի ունեցել մերձակա գյուղերի վրա՝ Տաթեւ, Գալիձոր, Սվարանց, Տանձատափ, Շինուհայր, Խոտ, եւ անմտություն է կարծել, որ ենթաշրջանի գյուղերը երբեք կփրկվեն ճոպանուղու շնորհիվ: Տանձատափ, Սվարանց, նաեւ Տաթեւ գյուղերի հոգեվարքն այլեւս անկասելի է: Խորհրդային վերջին տարիներին մահվան ստույգ ռեկտերի վրա դրվեց ենթաշրջանի մյուս գյուղը՝ Մալոբաշը, որ հիմա Քաշունի ենթ անվանում, որի փրկություն մասին խոսելն ավելորդ է նույնիսկ:

«Տաթեւի թեւեր» ճոպանուղու գործելակերպում, միաժամանակ, երեւան են գալիս երեւոյթներ, որոնք, շատերի կարծիքով, անբնական են, երբեմն՝ արհեստածին: Օրինակ, ի՞նչ բացատրություն տալ երեւոյթին, որ ճոպանուղու հետ կապված բոլոր ենթակառուցների անվանումներում շոյալորեն տեղ է գտնում Տաթեւ բաղադրիչը: Ճոպանուղին, որքան էլ արժանի է գովասանքի, միեւնոյն է՝ սովորական բիզնես է՝ շահույթ հետապնդող (ի վերջո), կողքի ռեստորանը՝ առավել եւս: Եվ սրբասուրբ Տաթեւ անունն այդ ռեստորանին կպցնելը («Տաթեւատուն») կամ «Տաթեւի թեւերը» «Տաթեւեր» անբացատրելի անուն դարձնելն այնքան էլ պատշաճ չէ: «Տաթեւատուն» ռեստորանը, օրի-

նակ, «Երեւանատուն» պիտի կոչել, քանզի այնտեղ իշխող գները՝ սուրճից, թեյից, սովորական հյութերից սկսած, աներեւակայելի են սյունիքյան ամբողջ շուկայի համար: Ոչինչ, որ մանրավաճառ փոքրիկ սրվակի մեջ մի քանի գրամ հող է վաճառում՝ ասելով, թե դա վանքի սրբազան հողից է, ոչինչ, որ մյուս մանրավաճառներն էլ վաճառվող ամեն ինչի վրա (հուշանվերներ, բուկետներ) Տաթեւի պատկերն են դաջում, բայց... Դա, անկեղծ լինենք, ամենեւին էլ չի կարող նպաստել եւ չի նպաստի Աստծո այդ տաճարի պրոպագանդանը, Քրիստոսի լույսի տարածմանը: Առայժմ Տաթեւ անունն օգտագործում ենք մեր անձնական շահույթն ապահովելու համար, առայժմ մենք Տաթեւին ոչինչ չենք տալիս, այլ վերցնում ենք: Այցելուներին հատկապես զարմացնում է ճոպանուղու շուրջ ձեւավորվող գնային միջավայրը: Ինչպես արդէն նշեցինք՝ «Տաթեւատուն» ռեստորանի գները (այն, որքանով հասկացանք, «Կակտոս» ֆիրման է շահագործում. մրցույթով է շահել) անգերազանցելի են ամբողջ Սյունիքում: Գորիսի 1-ից նոր սակագներ են մտցվել նաեւ ճոպանուղու տոմսերի համար: Նախ՝ մերձակա վեց գյուղի բնակիչները (Տաթեւ, Գալիձոր, Շինուհայր, Խոտ, Սվարանց եւ Տանձատափ) գրկվել են ճոպանուղուց անվճար օգուտներով իրավունքից, որ սահմանված էր ի վերուստ: Գիմա այդ գյուղերի բնակիչները երբեք եկելու համար (միակողմանի) պետք է վճարեն 500 դրամ, երկկողմանի երթևեկության համար՝ 1000 դրամ: Մյուս հաճախորդների համար տոմսի վճարը դարձել է 3 հազար դրամ (2 հազարի փոխարեն)՝ միակողմանի երթևեկության համար, եւ 4 հազար դրամ (3 հազարի փոխարեն)՝ երկկողմանի երթևեկության համար: Գորիսում այդ իրողությունը չի մեղմվել եւ

համարում եւ այսպիսի համեմատություն անում՝ «Գորիսից Երեւան հասնելն ավելի էժան է, քան Գալիձորից Տաթեւ գնալը»: Ճոպանուղու նոր սակագներից դժգոհություն հայտնեցին հաճախորդներից շատերը: Նրանք օրինաչափ հարց են տալիս՝ իսկ ո՞վ է վերահսկում ճոպանուղու սակագնային քաղաքականությունը, կա՞ր երաշխիք, որ գները նորից չեն բարձրանա: Ճոպանուղու աշխատակիցները, մինչդեռ, գների բարձրացման հետ կապված, ինչպես եւ սպասում էինք, ստանդարտ պատասխան տվեցին՝ «Համաշխարհային գները՝ ճոպանուղու ոլորտում, շատ բարձր են, մեզ մոտ նույնիսկ սպասվածից ցածր են»: Իհարկե, դա գրագետ պատասխան չէ: Համոզիչ չէ նաեւ փաստարկը, որ աշխատողների թիվը երկու տարվա ընթացքում գրեթե կրկնապատկվել է եւ հասել մոտ 50-ի, որ ճոպանուղու երկու կայարանի մերձակայքում (հատկապես Գալիձորում) դրական փոփոխություններ են կատարվել: Գների առումով, կարելի է ասել, բացառություն է (դրականորեն) Գալիձորի անտառում գտնվող «Հարսնածոր» բացօթյա սրճարան-ռեստորանը: Ճոպանուղու կանգառներում (Տաթեւում եւ Գալիձորում) աչքի են ընկնում մի քանի վահանակներ՝ ճոպանուղու մասին կանգամանակից տեղեկություններ պարունակող: Որոշ վահանակներ էլ պատմում են «Տաթեւի վերածնունդ» երկարաժամկետ ծրագրի տեսլականի մասին: Դրանցից մեկի վրա կարդում ենք՝ «Մինչեւ 2016թ. Տաթեւը վեր կհանի որպես աշխույժ մշակութային եւ համայնքային բարգավաճման կենտրոն: Տաթեւի հոգեւոր կառույցները կվերականգվեն, իսկ համալիրի հոգեւոր եւ գիտական ավանդույթները կրկին կյանքի կկոչվեն: Վանքի շրջակա գյուղերը կպարտավեն այնպիսի ներշնչանքով ու եռանդով, որ չեն զգացել դարեր շարունակ»: Թե որքանով է հնարավոր այդ տեսլականի իրականացումը՝ ժամանակը ցույց կտա: Բայց ծրագրի հռչակումից անցել է երկու տարի, եւ որեւէ աշխատանք դեռեւս չի կատարվել: Իհարկե, չենք ուզում հա-

վատալ մամուլում շրջանառվող խոսակցություններին, թե Սվարանցի մետաղական հանքավայրի շահագործման հետ կապված ծրագրերը կարող են եւ խանգարել «Տաթեւի վերածնունդ» ծրագիրը կյանքի կոչելուն: Սակայն, փաստը մնում է փաստ, որ ամիսներ առաջ «Ազգային մրցունակության հիմնադրամի» ղեկավարությունը մեղադրվել էր այդ բանում, որ ժամանակին հաշվի չի առել այդ իրողությունը: Մի համեզանք էլ. «Տաթեւի վերածնունդ» ծրագրի շրջանակից Բարձրավան եւ Գալիձոր գյուղերը դուրս թողնելն առնվազն գիտական չէ: Առանց այդ երկու գյուղի չի կարող ամբողջական լինել Տաթեւ պատմամշակութային միջավայր ասվածը: Եվ ուրեմն՝ քանի դեռ վերջնական ու մանրամասն տեսքի չի բերվել «Տաթեւի վերածնունդ» ծրագիրը, պետք է նկատի ունենալ այդ դիտարկումը եւս, ինչի օգտին արտահայտվել են նաեւ բազմաթիվ գիտնականներ: Ծրագիրն իրագործելիս (եթե իսկապես կյանքի կոչվի այն) կարելու նշանակություն պետք է ձեռք բերի վանքի տարածքի հողային աշխատանքը՝ նկատի ունենալով, որ այնտեղ երբեք պեղումներ չեն կատարվել: Ավելի ճիշտ՝ հողային աշխատանքները չեն կարող չուղեկվել պեղումներով: Այդ զգուշավորությունը, որքանով տեղյակ ենք, հաշվի չէր առնվել 2010-ին (ճոպանուղու գործարկումից առաջ) այնտեղ կատարված հողային աշխատանքների ժամանակ: Շատ կարելու է ճանապարհի անմխիթար վիճակի շտկումը՝ հատկապես Սատանայի կամրջից մինչեւ Տաթեւ ընկած հատվածում: Մի քիչ էլ, կարծում ենք, ուշադիր պետք է գտնվել վանքի տարածքում՝ ցուցափեղկերի ու վահանակների միջոցով մատուցվող պատմական նյութերի նկատմամբ, որոնք, իբր կոչված են համառոտ տեղեկություններ տալու Տաթեւի վանքի պատմությանն առնչվող շատ-շատ հարցերի վերաբերյալ: Մինչդեռ վրիպակները (նաեւ անճշտություններն ու վիճահարույց մեկնաբանությունները) դրանցում բազմաթիվ են, ինչի մասին քանիցս գրվել է նաեւ մեր թերթում: **ՍԱՍՎԵ ԱՆԵՔՍԱՆԱՆ**

«Ազոսով պահի, որ աչքդ հանի». կամ ո՞վ է իրականում ընտրելու Կապանի քաղաքապետին

ԱՐԶԱԳԱՆԵ ԿՊՈՒՆՅԱՆ ԱՆՅՈՒՂԱՐԶԻՆ

Հայաստանի ռադիացիայի մաքրաքաղաքը Սյունիքի մարզի Քաջարան քաղաքն է: Իսկ պաշտոնաթղթերի հարաբերակցությամբ՝ Կապանը: Եվ ահա այս հանրաժանության, հանրային թափոնների ու պոստամարտերի վրա ցերեկը ազոսովներ են պարտվում, իսկ գիշերը՝ ուրվականներ: Ի՞նչ են ման գալիս:

Բայց թույլ տվեք, առանց այս հարցին ուղղակի պատասխանելու, քննարկել մի բան, որն ինձ զարմացրեց, զայրացրեց եւ տխրեցրեց: Համա՞րա՞յն կլանի կողմից «չիսկվող» Կապանի «խուստուփ TV»-ն 20.08.2012թ. իր հիմնական թողարկման ժամանակ հարցազրույց է վարել Սյունիքի ՀՀԿ-ական մարզպետ Սուրեն Խաչատրյանի ու Քաջարանում գործող «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» (ՀՊՄԿ) գործադիր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի հետ, որը հարավային Սյունիքից «ընտրված» ՀՀԿ-ական օլիգարխ Աժ պատգամավոր քաջարանցի Վահե Հակոբյանի հայրն է:

Նախ, որոշ կրճատումներով, բառացի բերեն Սյունիքի այս երկու «փրկիչները» ասածը.

Մ ա թ զ պ ե տ Սուրեն Խաչատրյան. «Ես պաշտպանելու եմ ՀՀԿ-ական Աշոտ Հայրապետյանին: Եվ իր թեկնածությունն այնքան էր ընդունելի, որ Քաջարանի կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանի համար էլ դա ընդունելի դարձավ ու երկուսով միասին պաշտպանելու ենք Աշոտ Հայրապետյանին: Այս միասնական գործունեության արդյունքում չափելու ա Կապանը եւ Սյունիքը: ...Ես համոզված եմ, որ մենք մինչեւ աշուն Կապանում բավականին մեծաքանակ բարեկարգման աշխատանքներ ենք անելու: ...Մեկ տարի հետո մենք ունենալու ենք լրիվ ուրիշ Կապան: Ես առաջիկայում Մաքսիմ Հակոբյանի հետ այցելելու եմ բոլոր թաղամասերը, որոնք բարեկարգման կարիք են զգում... Այս ընտրությունները մեզ համար շատ կարեւոր ա...»:

ՀՊՄԿ տնօրեն Մաքսիմ Հակոբյան. «Իմ դիրքորոշումը հստակ է եւ այն ձեւավորվել է Աժ-ի ընտրությունների ժամանակ: Դուք լավ գիտեք, որ Արտուր Աթայանին (Կապանի ներկա դաշնակ քաղաքապետը-հեղ.) նախորդ ընտրության ժամանակ աջակցել եմ: Այսօր իշխող կուսակցությունը դա ՀՀԿ-ն է: ...Դրա համար ես գտնում եմ, որ պետք է աջակցենք ՀՀԿ-ին: Կրկնում եմ, ես տեսա, որ Աժ-ի ընտրությունների ժամանակ խնդիրներ ենք ունենում: Դրա համար մենք պիտի ընտրենք իշխող կուսակցության անդամին»:

Հիմա գալիս է ամենակարեւոր հարցը. եթե Հայաստանը պետություն ու պետականություն ունեցող երկիր է, այդ ի՞նչ խնդիրներ պիտի ունենա մասնավոր մի ձեռնարկության տնօրեն ընտրությունների հետ: Կամ Սյունիքի ապրելու մի-

ջավայրը մեկընդմիջ կործանող ու 60%-ով գերմանացու պատկանող մի մասնավոր ձեռնարկություն ի՞նչու եւ ինչպե՞ս է այսքան ներքաշված պետական/տեղական ընտրություններում: Ի՞նչ նպատակով:

Որպեսզի Քաջարան եւ նմանատիպ գյուղերը որպես «պետական գերակա շահ» նվիրվեն իրենց: Թե՞ Արտուր Աթայանին «պատժում» են, քանի որ ուրանի դեմ պայքարի ժամանակ հանդգնեց բերանը բացել ուրանի դեմ ու իրենց պետք է ավելի հնազանդ մարդ, որ Լեռնաձորյան ուրանի հանքի բացումը նորից մեյդան բերեն: Կամ ինչո՞ւ մարզպետն ու ասպետը ընտրություններից 3-4 շաբաթ առաջ միայն որոշեցին թաղամասեր այցելել: Կամ մի՞թե «բարեգործությունն» այդքան ցուցադրական ու ամեն առիթով շեշտվող է լինում:

Կամ մի՞թե սա քաղաքական շանտաժ է, որ եթե չընտրվի ՀՀԿ թեկնածուն, ապա Կ ա պ ա ն ու մ բան չեն վերանորոգի:

Կ ա մ մի՞թե



Կապանն էլ պիտի մանեցնեն «քաջերի» քաղաք Քաջարանին, որտեղ քաղաքապետի թեկնածու մնաց միայն մի մարդ՝ ՀՀԿ-ական թեկնածուն (ինչ «անակնկալ»):

Կամ մի՞թե ժամանակը չէ, որ «խուստուփ TV»-ն վերջ տա իր «ծրի» ՀՀԿ-ական ու հանրային պրոպագանդային ու գոնե մի քիչ սկսի զբաղվել նորմալ ժուռնալիստիկայով, ու interview-ների ժամանակ սկսի համարձակվել հարցեր տալ/բերանը բացել: Մի՞թե ընտրությունից մի քանի օր առաջ որոշ թեկնածուներին (վճարովի) հավասար մի քանի թույլ տրամադրելով է որոշվում արդար ու անկախ TV լինելը: Իսկ դրանից առաջ կատարված ողջ պրոպագանդա՞ն:

Հարավային Սյունիքի հանքերի, հանքային թափոնների ու պոստամարտերի վրա ցերեկը Գավիթբեկյան Ուխտերի «արծիվները» եւ Հայոց «արծիվներն» են պատվում, իսկ գիշերը՝ քաղցկեղից մահացածների ուրվականները:

Իմ մանկության տունը Կապանում այլեւս չկա. մնաց հանքերի տակ: Հուսով եմ Կապանն էլ նույն ճակատագրին չի արժանանա:

Ես անկուսակցական եմ ու դաշնակցության այդքան էլ ջատագով չեմ, բայց բոլոր կապանցիներին կոչ եմ անում ընտրել Արտուր Աթայանին՝ որպես Կապանի քաղաքապետ, որպեսզի կլանը ճանաչի իր տեղը ու չգրավի Կապան քաղաքն էլ:

ՎԱՐԱՋ ՍՅՈՒՆԻ
23.08.2012թ.,
Ամստերդամ, hetq.am

Ի՞նչ է կատարվել Կապանում օգոստոսի 29-ի լույս 30-ի գիշերը



ՀԱՍՏՐԻ ՉԼԽԱՎՈՐ ՀԱՐՅՈ

Սկզբը՝ էջ 1

Ինչո՞ւ ՀՀԿ Կապանի «Արամ Մանուկյան» կոմիտեն չի հրապարակում շանտաժի եւ ահաբեկման բոլոր դեպքերը, որոնք, ըստ կոմիտեի

հայտարարության, տեղ են գտել օգոստոսի 30-ին նախորդող օրերին: Ինչո՞ւ Ա.Աթայանը, Գ. Ղահրամանյանը, ՀՀԿ երեսփոխանը եւ ՀՀԿ «Արամ Մանուկյան» կոմիտեն որպես թիրախ անընդհատ մատնանշում են Սուրիկ Խաչատրյանի անու-

նը եւ համառորեն հրաժարվում են նշել Մաքսիմի անունը (բացի մեկ հայտարարությունից), ով իր պաշտոնի եւ գրպանի գործառնաբան անձամբ է մասնակցել Կապանում ծավալված նախընտրական իրադարձություններին, ով օգոստոսի սկզբին անձամբ է Արտուր Աթայանին ինքնաբացարկի առաջարկ արել ու իր պահանջը ներկայացրել իբրեւ ՀՀ նախագահի կողմից տրված հրահանգ:

Ինչո՞ւ Աշոտ Հայրապետյանն այս ամենից հետո ինքնաբացարկ չի ներկայացնում եւ չի ուզում քաղաքապետ ընտրվել առանց կասկածելի հանգամանքների, չէ՞ որ ինքը (այս ամենի արդյունքում) այլեւս չի կարող ընտրված համարվել, լեզիտիմ կոչվել (ինչպիսի հայտարարություններով էլ հանդես գա իր շտաբը) եւ իր գլխին կրել ընտրալի պսակը:

Եվ, վերջապես, ո՞ւմ էր ձեռնտու, որ ՀՀ իշխող վարչախմբի հանդեպ լոյալությանը աչքի ընկնող Կապանը ՀՀ նախագահի ընտրություններից մի քանի ամիս առաջ դուրս գա ընդդեմ Սերժ Սարգսյանի: Ո՞ւմ գրված սցենարով կարողացան կապանցիներին մի քանի օրվա ընթացքում հանել ընդդեմ գործող նախագահի:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Թող Արտուր Աթայանն ազնվորեն պատմի, թե ինչու է հրաժարվել ընտրապայքարից»



ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ՀԱՍՏՐԻՆ

Սկզբը՝ էջ 1

ցարկի դիմումը ծնվել՝ թող Արտուր Աթայանն ազնվորեն պատմի, թող կապանցիներն իմանան, եւ ամեն ինչ իր տեղը կընկնի: Մենք չորս տարի միասին եւ համերաշխ աշխատել ենք, ու այսօր չէի ցանկանա նրա անձնական գաղտնիքները բացել ու նրա փոխարեն խոսել: Մի բան կարող եմ Կապանի ընտրողներին հավատացնել՝ որեւէ ահաբեկում, որեւէ շանտաժ Արտուր Աթայանի հանդեպ չի եղել եւ չէր կարող լինել: Իսկ այն դրդապատճառների հետ, որոնց արդյունքում ինքնաբացարկ է ներկայացրել, Սյունիքի մարզպետն ու մարզպետարանը որեւէ կապ չունեն: Դա, վստահ եմ, կհաստատի նաեւ Արտուր Աթայանը:

— Այդուհանդերձ Կապանի ավագանու անդամի թեկնածու Գագիկ Ղահրամանյանը սեպտեմբերի 1-ին

ուզում խնդրեմ, ես էլ կարող եմ միտինգ հրավիրել ու իմ դիրքորոշումը հիշեցնել: «Կապանը՝ կապանցիներին է», խնդրեմ... Համաձայն եմ, որ ծննդավայրով չէ պայմանավորված կապանցի լինել-չլինելը, այլ՝ գործով, կատարած աշխատանքով: Թող յուրաքանչյուր ներկայացնենք հօգուտ Կապանի մեր կատարածը:

— Մինչեւ սեպտեմբերի 9-ը մնացել է հինգ օր, եւ չենք կարող շրջանցել Սիսիանի քաղաքապետի ընտրությանն առնչվող մի հարց: Համայնքի ղեկավարի թեկնածուներից ո՞ր մեկին են աստարում ՀՀԿ-ն, Սյունիքի մարզպետը: Վերջին օրերին Սիսիանում սպասում էին, որ, ուր որ է, ՀՀԿ-ն ՀՀԿ-ական Աղայի Հակոբջանյանին աջակցելու հայտարարություն կանի: Նաեւ շրջանառվում է խոսակցություն, թե իբր Հովիկ Աբրահամյանի հորդորով եք հրաժարվել Սիսիանում քաղաքապետի թեկնածու առաջադրելուց:

— Արդեն առիթ եմ ունեցել լրատվամիջոցներով հայտարարել, որ շրջանառվող այդ խոսակցությունը, կապված Հովիկ Աբրահամյանի հետ, անհիմն է եւ իրականության հետ որեւէ կապ չունի: Սիսիանում, տեղական մի շարք առանձնահատկություններ հաշվի առնելով, պարզապես մեր թեկնածուն չառաջադրեցինք: Սիսիանում վերկուսակցական մոտեցում որդեգրեցինք, ի վերջո ՀՀԿ-ն իշխող կուսակցություն է եւ բնակչության բոլոր խավերի շահերն ու ցանկություններն է արտահայտում: Սիսիանում, ինչպես եւ մարզի մյուս համայնքներում, ամեն ինչ արել է անում ենք, որ օրինական ընտրություններ տեղի ունենան: Այնպես որ՝ Սիսիանում որեւէ կոնկրետ թեկնածու չենք պաշտպանում: Մենք կաշխատենք այն քաղաքապետի հետ, ով կստանա սիսիանցի ընտրողների վստահության քվե:

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍՂԱՎԻՆ ՆԱԿԱՍՏՐՈՅԱՆԻ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ 2012թ. սեպտեմբերի 2-ին մահացել է Սեդրու երկաթգծի վերջին կայարանապետ Գեորգի Հայրապետյանը (ծնվել է 1928թ.): 2009թ. հոկտեմբերի 10-ին նա հարցազրույց էր տվել մեր թերթին: «Սյունյաց երկիր» խմբագրակազմն իր ափսոսանքն է հայտնում Գեորգի Հայրապետյանի մահվան կապակցությամբ:

Տեղեկատվական կենտրոն՝ Կապանում

Օգոստոսի 31-ին բացվեց «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության տեղեկատվական կենտրոնը:

Արարողությունը, որին ներկա էին ընկերության սեփականատեր «Դանդի փրիշլս մեթալ» ընկերության արտադրության ինքնուրույն փոխտնօրեն Ռիկ Յառուսը, «Դինո գոլդ մայնինգ քամփնի» գլխավոր տնօրեն Իլյա Գարկովը եւ վարչա-

կան գծով տնօրեն Յուրի Զաբրաչյանը: Միջոցառման ժամանակ պատվոգիր եւ հուշամեդալ հանձնեցին Միշա Գրիգորյանին, ով 53 տարի աշխատել է ձեռնարկությունում: Յուրի Զաբրաչյանը շնորհակալությամբ արտահայտվեց իր հարգածով և հուշամեդալը հանձնեց Միշային:

Վերջինս արտահայտեց իր հարգածը Միշայի նկատմամբ և ցանկացավ հանձնարարել իր հարգածը Միշային: Միշայը արտահայտեց իր հարգածը Միշայի նկատմամբ և ցանկացավ հանձնարարել իր հարգածը Միշային:

ԶԱՐԻՆԵ ԶԱՄԵՐԱԶՈՒՅԱՆ

Ինչո՞ւ է պաշտոնանկ արվել մարզի դատախազը

ԱՆՊՍԱՍԻԱՆ ԿԱՐՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոստոսի 28-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով պաշտոնանկ է արվել Սյունիքի մարզի դատախազ Արայիկ Թարվերդյանը: Պաշտոնական հաղորդագրության մեջ խոսք է կա պաշտոնանկության պատճառների մասին: Ամենաառաջին վարկածը կապված է Քաջարանում 2010թ. օգոստոսին կատարված հայտնի սպանության հետ: Սպանված Գրիգոր Պապյանի հարազատները մինչև հիմա համոզված չեն, որ Սահակ Սահակյանն է իրենց որդուն սպանողը: Ըստ նրանց՝ Սահակ Սահակյանը, ով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով, 12-ամյա բանտարկությունը կրում է հանդիմանի, իսկ իրական մարդասպանն ազատության մեջ է: Տուժող կողմը բողոքարկել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռը: Բողոքարկման հիման վրա ՀՀ վերաքննիչ դատարանը բեկանել է դատավճիռը եւ գործը ուղարկել նոր դատաքննության: Եվ մինչև հիմա շարունակվում է դատաքննությունը: Թե ինչ ավարտ կունենա Գրիգոր Պապյանի սպանության նոր քննությունը՝ կիմանանք հետո: Բայց առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանման փաստը խոսում է այն մասին, որ դատական վերին ատյանը համաձայն չէ նշանակված մեղադրանքին, ինչը, գործող կարգի համաձայն, նախապես հաստատվել էր մարզի դատա-

խազությունում: Գործի քննությունը հսկող դատախազ Էդիկ Գովսեփյանի ճակատագիրն ու պատասխանատվության ենթարկելու հարցը կորոշվի դատական քննության ավարտից հետո: Մինչ այդ, սակայն, պաշտոնանկ է արվել մարզի դատախազը... Իհարկե, վերը շարադրվածը շրջանառվող վարկածներից մեկն է միայն, ինչի հավաստիությունը կպարզվի ժամանակի ընթացքում:

Դատախազի պաշտոնանկության վարկածները քննարկելու հետ մեկտեղ հանրությունն այս օրերին քննարկում է նաև Արայիկ Թարվերդյանի սյունիքյան գործունեությունը: Ամբողջ պաշտոնավարման ընթացքում գրեթե ոչ մի անգամ ոտք չդրեց Սյունիքի մարզպետարանի շենք: Բայց դա, ըստ էության, քաջության դրսեւորում չէր: Ինքնամիտ մարդ էր, մինչև վերջ չչփվեց հասարակության հետ, մինչև վերջ իրեն վերապահեց օտարի կարգավիճակ:

Նա Սյունիքի դատախազն էր 2008-ի մարտյան օրերին (նշանակվել էր 2007-ի հուլիսին): Նրա աչքի առաջ մարզի ոստիկանապետը, Գորիսի, Կապանի ու Սիսիանի ոստիկանապետերն այդ օրերին թույլ տվեցին հակասահմանադրական բազմաթիվ արարքներ, հանրության մեջ սերմանեցին ատելություն հայոց պետականության դեմ, բազմաթիվ մարդկանց ապօրինի կարգով բերման ենթարկեցին ոստիկանության բաժիններ, բայց ինքը չփորձեց սանձել նրանց:

Նա դատախազական հսկողությունը ընդերքի օգտագործման, բնապահպանական հարցերում հասցրեց գայիս:

Նա դատախազությունում փա-

կեց տեղական կադրերի ճանապարհը եւ կանաչ լույս վառեց դրսի կադրերի առջև:

Նա չկարողացավ չափ դնել որոշ կանոնների ներկայացուցիչների փոխարինումը ու սանձարձակությունների վրա, եւ այդ սանձարձակությունները շարունակվեցին ու շատ թանկ մատչեցին Սյունիքի մարզի բնակչության վրա:

Նրա պաշտոնավարման ժամանակ մարզի դատախազությունն ու առհասարակ մարզի իրավապահ համակարգն ավելի հարազատ չդարձավ ժողովրդին:

Նրա համար ընդունելի չէր նաև «Սյունյաց երկիր» թերթի ու նրա խմբագրի պահվածքը:

Մյու բոլորով հանդերձ, սակայն, նա ավելի վատը չէր, քան մարտի-ներն էին եւ մարզում, եւ մարզի շրջաններում: Սյունիքը տասնամյակների ընթացքում գործ էր ունեցել դատախազների այնպիսի բույլի հետ, որոնց բնության մեջ կարելի է հանդիպել հազար տարին մեկ անգամ: Ի տարբերություն շատերի՝ գրագետ էր (գործընկերների վկայությամբ), մտավորականի կեղծ մունդիր չէր հանգում եւ չէր խաղում ուրիշների հանգույն, տնտեսվարող սուբյեկտների ղեկավարների ընդունակությունը չէր նստում՝ մի քանի մանեթ փախցնելու համար... Բայց դրանք հիմա կարելի էր չեն: Կարելի էր այն է, թե ինչ է կատարվել Սյունիքի մարզի դատախազությունում, որն էլ պատճառ է դարձել մարզի դատախազի պաշտոնանկության: Չենց այդ հարցի շուրջ էլ ակնկալում ենք դատախազության հանգամանակից պարզաբանումը:

ԱՍՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



ԼԵՎՈՆ ԱՍՅԱԿՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔ

Սի Գահանջիր
Մի՛ նահանջիր, մարդ-Աստված, Մեծերը միշտ կա ու կա, Քոնն է խավարն ահագնաբեւ, Բայց եւ օրն այս արեւկա,

Անգուզական պարզեւ է մի Կյանքը՝ լցված ավետափ, Ե՛լ, վերցրու բաժինը քո Ե՛լ մի՛ նարիր հուսախար.

Ե՛լ, դառնախոս ցավի կողքին Հայրը խմիր խաղողի, Չի՛ թերանա ժամանակը, Մեր ներկան է կհողի...

Մի՛ ընկրկիր թախտահայաց, Գրկիր օրն այս արեւկա, Օջախ հիմնիր, փնկիր մի ծառ, Մահը միշտ է կա ու կա:

Սպասում
Մենք Հիտուսին խաչ հանեցինք Ե՛լ ու գում ենք մի նոր Հիտուս, Իբր նրան լավ չգրեսանք, Լույսը քիչ էր ու մենք՝ անուս.

Ե՛լ Տերը մեզ խաչ է փայխ, Ամեն մեկին՝ ծանր մի խաչ, Որ մեր բաժին մեղքը քավենք, Մեղքը մեր մեծ՝ նրա առաջ.

Ու Տերը մեզ հույս է փայխ, Ժամանակ է բաշխում անվերջ, Որ սթափվենք, լինենք հասու Ապրելու իր դրախտի մեջ...

Մինչև ե՛րբ...
Այսքան վանկուց, միայնուց հեպո Միտքն այս եր կեակ՝ մերկ ու նախնական՝ Ճուտ է աշխարհը մարդու կարծիքով, Աստուծո՞ւ փրկածով շիտակ է սակայն.

Ճշմարտանման իր ուսմունքներով Մարդը գորու է միտքը պատճռել, Բայց ո՛ր է Տերը իր ուղեցույցով Ե՛լ կյանքն ինչո՞ւ է այսպես խճճել.

Կարգն ու քառքը հար մըցակցելով Նոր վարկածներ են լիաբուռ շարում... Մինչև ե՛րբ պիտի ՄԱՐԿՎ փանուկ փայ Այս փարերային, անարդար խաղում: ***

Իսկ մըքերս՝ խառն ու ցրիվ՝ Մեր նախրյան երկրի նման Ե՛րբ են մի օրի մի գալու, Դառնալու կուտ եւ փրկակալ...

Յուրահարուկ անփութություն, Շեղող հեքիաթ ու ասք պարփր, Բավ է լացը բախար համարել, Դժվար հացը՝ ճակարագիր.

Մեզ վիճակված այս աշխարհում Գրչի հեք պիտի սուր ունենալ Ու չգիջել հեշտին ոչինչ Ե՛լ չլինել այսքան շռայլ.

Գրչի հեք՝ սուր, զգոնություն, Քանի դեռ կա ոտխն անհաշտ Ե՛լ փայտոջիլ փան թշնամին՝ Ներսից լափող ու մորթապաշտ... ***

Մի՛թե այդպես էլ մարդկությունն ապրել Բանակախոյությունը չի կարողանա Բյուր-հազար ուսմունք, հեղափոխություն, Ավաղ, չբերին դրախտը նրա, Ոչ ոք չգիտի՝ ինչու է ծնվում Ե՛լ գոյությունն իր ու՛մ է հարկավոր.

Մենք կյանքը գիտենք մեզ հասու չափով Ու այդ չափում էլ գործում ենք այսօր.

Անանձնապարկան պանդուխտներ ենք մենք, Մեր արյան մեջ էլ շիճուկ կա չարի, Մեր խաղում է, ասես, մեզանով, Չգիտենք՝ որքան պիտի չարչարի.

Մարդը՝ միայնակ ու փրկանապալի, Աչքերը հառած անհայտին այն ծով, Հանց մոլորյալը մեծ անապատում, Քանի չի մեռել, գնում է հույսով.

Գնում է՝ լեզվին, թեւերին շղթա Ե՛լ ծանրաձանր ոտնակապերով... Տե՛ր, ծուռ աշխարհը շարկելու համար Քանի՛ սերունդ ու դար է հարկավոր:

Քիչ էլ մնա
Չսիրվելով սիրելե Գոզան, հոգնած եմ հիմա... (Վ. Թեքեյան)

Մի՛, մի՛ խրվիր պախարայի պես, Չյունաճերմակ աղջիկ, Շոյում են քեզ լոկ հայացքով Ու հիացքով քաղցրիկ.

Հիտունը անց այր եմ ծարավ, Հուզավարար պոեթ, Եղի եմ ես քո փարիքին Ե՛լ ցանկալի, եւ խենթ.

Այն ժամանակ դու իմ կողքով Չէիր անցնի անհոգ, Կփոթորկվեր սիրտը մեկնե, Կբռնկվեր բողբոջ.

Ու ես այսպես չէի խնորի, Կգերեի սիրով Ե՛լ փրիքարար կըրքի Զո հնայքի ծիրով.

Մնա անչար, առեղծական Ու մի նախր մռայլ, Եղի եմ ես քո փարիքին, Եղի ձրի, շռայլ...

Ուրդ կախ փուր, քիչ էլ մնա, Այնքան լավ է քեզ հեք, Թող որ այսօր երկար սպասեն Ջահելները ապալեք:

Թող գա...
Այդ ո՛վ է ասում, թե չունեն ոչինչ, Իմն է աշխարհը այս պոքոք ու ջինջ, Իմն է սպասելու կարողությունը Եկող հաղթության թե՛ծ ցնծությունը: Ինձ քույր է ամեն մայրաքոջ փրկիկ, Ինձ համար գանձ է ամեն նորածին, Իմն են աշխարհի բարին ու չարը, Մեծաբաղանդն ու թշվառ անձարը, Արեւկա օրվա պայծառությունը, Խավար գիշերվա անհայտությունը: Իմն են գինվորի լուրջ քննությունը Ե՛լ սիրահարի անքնությունը, Վերջին հույսի թույլ, բայց թանկ կայծերը Ու կակածների անվերջ այցերը, Անել արքայի պողպատն հուզումը, Հասարակ մարդու վե՛ն ընդվզումը: Իմն են հոգեծին բարությունները, Թեպետափ անող սպորտությունները, Պեղող, թեւածող սուրսայր մըքերը Ե՛լ փրկաբերի ողջ գաղտնիքները: Իմն են մարդակեր այս իրջիւնները Ու մեր բարձրյալի բյուր խնդիրները...

Այդ ո՛վ է խոսում եղած-չեղածից, Թող գա, կզիջե՛ն իմ ունեցածից:

Չեն դառնա
Կարգին հոգնել եմ ճնճողաձիվերից Ե՛լ կռոջներեցի գորս ու ագռավի, Փոքրերը այս ի՛նչ դասեր են փայլիս՝ Ինքնահնապլած ու մեծակարի:

Սովորեցնում, ուղղում են լրջմիտ, Դարձած բնադար, գրականագետ, Նորբյան պոեթ, վերջին մտիկան, Մինչ իրականում՝ գրական աղետ:

Նախանձի որոշ ուրում է նրանց, Լավ խոսք, ասես, ռուս է ավերիչ... Չեն դառնա երբեք մարդուկները մարդ, Ե՛լ գրչակները չեն դառնա գրիչ:

Ռուբեն Պետրոսյան

ԽՈՍՔ ԳԻՇԱՏԱԿԻ

Կյանքի 68-րդ տարում հանկարծամահ եղավ Ռուբեն Վազգենի Պետրոսյանը: Ծնվել է 1945թ. հունվարի 29-ին Կապանի շրջանի Կավարտ բանավանում, ծառայողի ընտանիքում: 1960-61 ուստարում ավարտել է Լենինաբերի N5 միջնակարգ դպրոցը, ծառայել խորհրդային բանակում: 1969-74թթ. աշխատանքին զուգահեռ ընդունվել է ավարտել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը՝ «ժողովրդական տնտեսության պլանավորում» մասնագիտությամբ: Բուհն ավարտելուց հետո աշխատել է «Սիրիուս» գործարանում՝ ԼԿԵՄ կոմիտեի ազատված քարտուղար: Այնուհետեւ տեղափոխվել է Կապան, աշխատանքի ընդունվել ավտոնորոգման գործա-

րանում՝ ավագ ինժեներ, որից հետո աշխատանքի անցել ՀԿԿ Կապանի շրջկոմում՝ հրահանգիչ: 1980թ. Ռուբեն Պետրոսյանը կրկին արտադրությունում էր՝ մինչև 1986թ. Կապանի կաթի գործարանի տնօրենն էր: Նրա պաշտոնավարման օրոք կառուցվել է գործարանի համալիրը՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով: 1986-1992թթ. աշխատել է հացի գործարանի տնօրեն: Այդ տարիներին շարք մտավ գործարանի նոր մասնաշենքը Շինարարների թաղամասում: Մինչև կենսաթոշակի անցնելը որոշ ժամանակ աշխատել է Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի երկաթգծային արտադրամասում:

Դեռ պիտի ապրեր անմիջական ու զրուցասեր մարդը, վայելել թոռնիկների քաղցրությունը, ուրախանար նրանց հաջողություններով, բայց նախախնամությունն այլ ճակատագիր էր նախատեսել: Շրջապատին նվիրված շիտակ մարդու, ընկերոջ, ընտանիքի հոր



հիշատակը չի խամրի ճանաչողներին սրտերում:

Սի խումբ ընկերներ

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրականը ցավակցում է Վահրամ Օրբելյանին՝ քրոջ ամուսնու՝ Ռուբեն Պետրոսյանի անժամանակ մահվան առթիվ:

ԱՐԱՋԱՆԳ



Շրվենանցի դպրոցը եւ ուսուցչի փունը կարող են փլուզվել

Կապանի Շրվենանց գյուղում «Առաջին լույսի ջահի» հարյուրամյա տոնակալին դպրոցի փակումը, որ ավելի ցավալի է համալիրի (նաեւ ուսուցչի փուն) փլուզման վրանգը կանխագալով՝ հարկ համարեցինք անդրադառնալ շրջանում առաջին ուսումնական օջախի արգասաբեր ուղու ու վաստակի հիշեցմանը:

Դպրոցի հիմնադիրն էր Բաքվի նավթահանքերի տեր, շրվենանցցի աղքատ քահանայի որդի Գասպար Յովհաննեսի Տեր-Մարգարյանը, ով նաեւ կրթալուսավորական ընկերության՝ «Արամազդի» նախագահն էր: Հայրենի գյուղին օգտակար լինելու ազնիվ մղումն օգնել է նրան դժվարությամբ կուտակած միջոցները ներդնել (նույնը՝ տիկնոջ՝ Շուշանիկի ծննդավայր Լոր գյուղում) դպրոցների կառուցմանը, զավակներ չունենալով հայտարարել: Կառուցված դպրոցները թող լինեն մեր զավակները: Շրվենանցի դպրոցը նախատեսված էր նաեւ Նորաշենիկի ենթաշրջանի 11-ից ավելի, Գորիսի՝ մերձակա գյուղերի երեխաների համար: Ըստ տվյալների՝ Շրվենանցի դպրոցի կառուցման վրա ծախսվել է 50 հազար ռուբլի (ոսկով), շինանյութերը մեծ դժվարությամբ Բաքվից են տեղափոխվել: Դպրոցի բացումը տեղի է ունեցել 1902թ., որի նավակառուցումը ողջունել է «Մշակ» թերթը: Տոնախմբություններ են կազմակերպվել շրջանի գյուղերի բնակիչների կողմից: Բարեգործը «Մշակ» թերթում հայտարարությամբ մատչելի աշխատավարձ է սահմանել ուսուցիչների համար, նրանց ապահովել անվճար բնակարանով, վառելիքով, նավթով: Ավագ ուսուցչի պաշտոնով Շրվենանց են եկել Բեռլինի համալսարանի



նի շրջանավարտ, աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննես Այվազովսկու հորեղբորորդին՝ Յակոբ Այվազյանը, Կապանի, Գորիսի, Շուշիի թեմական դպրոցի, պրոգիմնագիայի ուսուցիչ-շրջանավարտներ: Նշանավոր քաղաքական գործիչ Գ.Տեր-Մինասյանի (ավագ ուսուցիչ) տված հաշվետվությունից՝ Շրվենանցի դպրոցն առավել է Մարիամյան եւ թեմական դպրոցների շենքերից: 1903թ. Շրվենանցի դպրոցում սովորում էր տարբեր սոցիալական խմբերից 136 աշակերտ, այդ թվում՝ չորս աղջիկ: Մինչեւ 1905թ. ուսումնական առարկաների մեծ մասը դասավանդվում էր ռուսերեն, այն ծխական դառնալուց ուսուցման լեզուն դառնում է հայերենը: Երեսույթ էր 1000 կտոր գրակառուցման (հայերեն եւ օտար լեզուներով) առաքումը եւ գրադարանի բացումը (հետագայում՝ նաեւ Ղափանում): Ուսուցման եւ մանկավարժական առաջավոր մեթոդների արմատավորման շնորհիվ դպրոցի համբավը տարածվում է Անդրկովկասում, իսկ բարերարն արժանանում է Կովկասի «Հայոց բարեգործական ընկերության» շնորհակալությանը, Գեւորգ կաթողիկոսի շնորհավորական երկու կոնդակին: Անվանի բարերարը վարկեր է տրամադրել առաջին համաշխարհային պատերազմում վիրավորված զինվորների համար Անդրկովկասի մի շարք քաղաքներում հիվանդանոցներ եւ լազարեթներ կառուցելու համար, այդ առիթով Թիֆլիսի քաղաքային դուման քաղաքագլուխ Ա.Խատիսյանի հետ միասին շնորհակալություն է հայտնել հայ բարեգործին՝ Գ.Տեր-Մարգարյանին, ով արժանացել է նաեւ գորավար Անդրանիկի գրավոր շնորհակալությանը:

1904թ. բարեգործի խնդրանքով եւ հովանավորությամբ (հազար ոսկով) մեծ դժվարությամբ Շրվենանց է գալիս գեղանկարիչ Գ.Բաշինջաղյանը եւ ստեղծում «Ձանգեզուրի լեռներում» (В горах Закавказья) կտավը (ընտիր ստեղծագործությունների ալբոմ, էջ 51): Գասպար Տեր-Մարգարյանի հովանավորությամբ մի շարք երիտասարդներ Ռուսաստանի եւ արտասահմանյան հեղինակավոր կրթօջախներում ուսանում եւ բարձրագույն կամ ռազմական կրթություն են ստանում, նրանց թվում նաեւ մեր հայրենակից վերինխոտանացի, Սիսիանի գործերի քաջ հրամանատար, Նժդեհի տեղակալ Պողոս Տեր-Դավթյանը, նաեւ հայ գրակառուցման, մշակույթի գործիչներ, հասարակական շարժման անվանի ղեկավարներ: Նրա ծախսերով 1917թ. Թիֆլիսի «Ալովո» տպարանում լույս է տեսնում նշանավոր պատմաբան Լեոյի «Հայոց պատմության» 1-ին հատորը, որի տիտղոսաբերքին մակագրված է՝ հրատարակությամբ Գ.Տեր-Մարգարյանի, հաջորդ էջին՝ «Տիկին Շուշանիկ եւ Գ.Տեր-Մարգարյանին եղբայրական զգացմունքով նվիրում է հեղինակը»: Սոցիալ-տնտեսական ծանր պայմանների պատճառով 1918թ. Շրվենանցի դպրոցը հարկադրաբար դադարեցնում է գործունեությունը, իսկ հայրենասեր բարեգործը տիկնոջ հետ տարագրվում է Ֆրանսիայի Նիցա քաղաքը, որտեղ 1935թ. կնքում է մահկանացուն, հեռավոր հայրենիքում թողնելով անմոռաց հիշողություններ: Մինչեւ Մեծ հայրենականը, թեպետ համարյա բոլոր գյուղերում գործում էին տարրական, երկամյա դպրոցներ, Շրվենանցի դպրոցը չգիջեց առաջնության դափնին. բարձրորակ կադրերով, համագործակցած փորձառու ուսուցիչների հետ շարունակում էր ժամանակի պահանջների ոգով կատարելագործել ուսուցման եւ դաստիարակության գործընթացը: 1936-37թթ. դպրոցը վերածում է միջնակարգի՝ անգամ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ապահովելով երեքական 8,9-րդ, երկուական 10-րդ դասարաններ՝ շուրջ 350 աշակերտով, իրականացնելով տարածաշրջանի դպրոցականների միջնակարգ կրթությունը: Սակայն հետագայում ուրբանիզացիայի հետեւանքով սկսեց նվազել նաեւ դպրոցը: 60-70-ականներին ուսուցչի տան կառուցումը, նոր կադրերով համալրումը, սպորտային համալիրի ստեղծումը, դպրոցը խնելու ջրով ապահովումը, ինտեռնատի բացումը, աշակերտների թվաքանակի կրկնակի մեծացումն անշուշտ կապահովվեին դպրոցի թերեւս ժամանակավոր գոյատևումը: Ժամանակին տեղական կուսակցական, խորհրդային մարմինների առջեւ, մանուկում հարց բարձրացվեց (մասնավորապես՝ Արցախյան պատերազմի տարիներին)՝ աջակցել, կանխել ստեղծված իրավիճակը, սակայն՝ անօգուտ: Սպասելի է, որ դարի կառույցը, որը երկու երկրաշարժի պայմաններում մազաչափ անգամ ոչնչով չտուժեց, նույն ուսուցչի տունն անձրեներից կարող է փլուզման ենթարկվել: Շրվենանցի դպրոցի չգոյությունն անարդար, անբարո գործողություն կորակվի ազնիվ, հայրենիքին մեծարժեք ծառայություններ մատուցած մարդու հիշատակի համոզեալ, խոր ափսոսանք կծնի դեռեւս կենդանի հատուկեմտ մանկավարժների, հարյուրավոր անվանի մարդկանց, հազարավոր շրջանավարտների սրտերում: **ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՊՈՍՅԱՆ**
Շրվենանցի դպրոցի շրջանավարտ եւ նախկին փունըն

Երեխայի պաշտպանությանը նվիրված միջոցառում Կապանում

ՄԱՍԼՈ ՉԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16 օգոստոսի 2012թ.
Օգոստոսի 16-ին Կապանի քաղաքապետարանը (քաղաքապետ Ա.Աթայան, քաղաքապետի խորհրդական Յասմինկ Աթայան) «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ կազմակերպեց երեխայի պաշտպանությանը նվիրված համայնքային միջոցառում: «Ծնողական եւ մանկական սրճարաններ» խորագրով միջոցառման ընթացքում մասնագետների կողմից անց էին կացվում երեխայի իրավունքների, երեխայի հանդեպ բռնության հետեւանքների, դրական ծնողավարության վերաբերյալ փոքրիկ դասընթացներ: Դասընթացները եւ խորհրդատվությունները վարում էին Սեյվ դը չիլդրեն-ի կողմից իրականացվող «Միավորվե՛ք հանուն երեխաների, փրկե՛ք ապագան» / ՄՅԵՓՄ / ծրագրով վերապատրաստված դասընթացավարները: Զրույցները եւ խորհրդատվությունները երեխաների հետ անց էին կացվում կազմակերպության կողմից մշակված «Անվտանգ եմ ես, անվտանգ ես դու» մեթոդաբանությամբ, օգնում էին երեխաներին ծանոթանալու իրենց իրավունքներին, սովորել հանդուրժողականությանը, իմանալու միմյանց օգնելու, բռնություններից զերծ մնալու ձևերը եւ զինում երեխային անհրաժեշտ կարողու-



թյուններով, գիտելիքներով: Ծնողներին ուսուցանվում էին երեխայի դատապարտության դրական մոտեցումները, որոնք օգնում են երեխայի առողջ զարգացման, բռնությունից պաշտպանված լինելու, երեխայի՝ իր ուսուցման մեջ մասնակցության ապահովմանը: Դաստիարակման դրական մոտեցումը երեխայի հանդեպ չբռնանալու հարգալից

մոտեցումն է: Այն կրթման մեթոդ է, որն օգնում է երեխաներին հաջողությունների հասնելու: Ծնողները կհստակ էին իրենց մտահոգությունները երեխայի տարիքային առանձնահատկությունների հետ կապված խնդիրների ծագման, նրանց աճող կարիքների բավարարման շուրջ: Ծնողները ծանոթացան պատժի, բռնության տեսակների ու հե-

տեւանքների, երեխայի զարգացման եւ հանդիպող խոչընդոտների հաղթահարման ուղիներին եւ դրանց ճիշտ արձագանքելու տարբերակներին: Խորհրդատվություններն օգնեցին նրանց ճիշտ ըմբռնելու դատապարտության եւ ծնողի պատասխանատվության կարեւորությունը, որն իրապես ազդում է երեխայի ինքնազարգացման, աճի եւ պատասխանատու քաղաքացու ձեւավորման վրա:

Միջոցառմանը ներկա էին ՄՅԵՓՄ ծրագրում ընդգրկված նախադպրոցական եւ կրթական հաստատությունների սաները, նրանց ծնողները, մասնագետներ, պետական ու հասարակական կառույցների, ՋԼՄ-երի ներկայացուցիչներ, քաղաքացիներ, Սեյվ դը չիլդրեն-ի ծրագրի պատասխանատուները:

«Սեյվ դը չիլդրենի» կողմից տրամադրվել էին գրականություն, գրեմական եւ այլ պարագաներ: Կարեւորելով նման օգտակար նախաձեռնությունները, կազմակերպությունն այլ համայնքների իշխանությունների հետ նույնպես ձեռնամուխ է եղել միջոցառումների կազմակերպմանը:

Միջոցառումն կազմակերպվեց ՄՅԵՓՄ ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ եւ «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի» համաֆինանսավորմամբ:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան գրասենյակ Կոնրակտային անձ՝ Նարինե Քեզիրգանյան
Երեւան 0023, Ազաթանգեղոսի 2ա, 2-րդ հարկ, հեռ.՝ (010) 56-23-35, (093) 25-62-25, էլ. փոստ՝ nbezirganyan@savechildren.org

Պարեգ Կապանն, ու ողջ Սյունիքը հիացալ

ՆԱԽԸՆՏՐՈՒԿԱՆ

Սեպտեմբերի 2-ին Կապանի Գարեգին Նժդեհի հրապարակում տեղի ունեցավ Թաթա Սիմոնյանի մենահամերգը, որը հովանավորել էին «Դիմո գոլդ մայնինգ քամփ-նի» ՓԲԸ-ն եւ բոլոր կապանցիների քաղաքապետ Արտուր Աթայանը: Համերգը նվեր էր կապանցիներին՝ գիտելիք եւ դպրության օրվա կապակցությամբ: Զնայած Արտուր Աթայանի՝ նախորդ օրվա ինքնաբերական հայտարարությունից հետո շատերը կարծում էին, թե համերգը չի կայանա, բայց այն, այնուամենայնիվ, տեղի ունեցավ, եւ դրան շնանգարեց անգամ ամբողջ օրը տեղացուղ հորդառատ անձրեւը: Մարդիկ պարում էին անձրեւանոցներով, առանց անձրեւանոցների, ոչ ոք պարտադրված չէր եկել, ներքին մի մղունով կապանցիները միավորվել, համախմբվել էին Գարեգին Նժդեհի անունը կրող հրապարակում: Ծատ ուրախացա, երբ Թաթա Սիմոնյանն այդպես էլ չերգեց իր հայտնի ու բոլորիս կողմից շատ սիրված «Տե-սա՞ր ինչ եղավ» երգը, որովհետեւ վերջին հաշվով ոչինչ էլ չեղավ, կարեւորը կու՞մ միասնությունն էր, որ այս անգամ եւս անքակտելի մնաց, կարեւորը պայքարի ոգին է ու օրհասական պահին մատ թափ տալու կարողությունը, ինչին ակամատես եղանակ: ...Ես կապանցու ցավը տանեմ:

ԱՐԱՎԻՆ ՆԱՎԱՍՏՐՈՒԿԱՆ

«Միասին կանխենք երեխայի հանդեպ բռնությունը համայնքում»

Միջոցառում Կապանի մանկական կենտրոնում

ՄԱՍԼՈ ՉԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16 օգոստոսի 2012թ.
Օգոստոսի 16-ին Կապանի մանկական կենտրոնում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ կազմակերպվեց երեխայի նկատմամբ բռնության հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառում «Միավորվե՛ք հանուն երեխաների, փրկե՛ք ապագան» ծրագրի շրջանակներում (ՄՅԵՓՄ): Նպատակն էր քննարկել երեխայի հանդեպ գործարկվող բռնության հետեւանքները, բացահայտել համայնքի հանրության վերաբերմունքը խնդրի հանդեպ: Սեյվ դը չիլդրեն-ի ներկայացուցիչ Արարատ Ալիխանյանն իր խոսքում կարեւորեց յուրաքանչյուրի դերը բռնության նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելու հարցում: Միջոցառումը նախաձեռնել էր կենտրոնի տնօրեն Սայա Միրզոյանը, ով հանդիսանում է նաեւ ՄՅԵՓՄ ծրագրի շրջանակներում ստեղծված երեխայի պաշտպանության թիմի անդամ: Հանգամանորեն ներկայացվեցին բռնության տեսակները, դրանց առանձնահատկությունները: Սեռական, ֆիզիկական, հոգեբանական, անտեսման բռնությունների հետեւանքների մասին խոսելիս մատնանշվեցին դրանց կործանարար ազդեցությունները երեխայի զարգացման ու ձեւավոր-

ման վրա, որոնք հետք են թողնում երեխայի առողջության եւ սոցիալիզացման վրա: Երեխայի խոցելիության պատճառները նշվեցին ալկոհոլի չարաշահումը, ընտանեկան բռնությունը, երեխայի կարիքների հանդեպ անտարբերությունը, վախեցնելը, մեկուսացնելը, շահագործումը, էմոցիոնալ «սառեցումը»: Բոլորը միակարծիք էին, որ անհրաժեշտ է նման դեպքերում երեխային օգնել հոգեպես, բուժ.միջամտությամբ եւ փորձել վերադարձնել հասարակություն, այլ ոչ պարսավել, մեկուսացնել ու թողնել անօգնական: Մասնակիցների կողմից նշվեցին այն կառույցները, որոնք պատասխանատու են կամ կոչված են պաշտպանելու երեխաներին վատ վերաբերմունքից. երեխայի իրավունքների պաշտպանության բաժին, հոգաբարձության եւ խնամակալության մարմիններ, դպրոցներ, բուժաստատություններ, ՀԿ-ներ, ոստիկանություն: Ներկայացվեցին երեխայի հանդեպ բռնության կիրառման վերջին տվյալները (ծամ. ՀՀ Ոստիկանության ԶԳԿ ԱԳ բաժին). նախորդ տարվա 1-ին կիսամյակի համեմատ աճել է անչափահասների հանդեպ բռնությունների թիվը. 83-ի փոխարեն՝ 108: Սեռական բռնությունը՝ նախորդ տարվա 33 դեպքի փոխարեն՝ 43: Ֆիզիկական բռնությունները՝ 29-ի փոխարեն՝ 46: Նվազել են անչափահասների կողմից կատարված հանցանքները: Ներկայացվեց նաեւ երեւոյթի դեմ պայքարի իրավական համատեքստը.

ինչպիսի ներպետական եւ միջազգային իրավական փաստաթղթերով եւ կանխարգելիչ մեխանիզմներով են պաշտպանված երեխաները, ինչպիսին է լինում արձագանքը բռնության բացահայտման եւ հետեւանքների չեզոքացման դեպքերում, թե որ կառույցներն են միասնական աշխատում երեխայի համար անվտանգ միջավայր պահովելու գործընթացում: Ամեն դեպքում երեխայի կյանքին վտանգ սպառնալու եւ նրա զարգացման համար առաջնային դերը վերապահվում է ծնողին. համակարծիք էին մասնակիցները:

«Երեւոյթի դեմ պայքարը կարող է տարվել իրավական մակարդակի առկայության եւ կառույցների եւ անհատների միջեւ համագործակցության դեպքում» – ամփոփեցին ներկաները՝ դիտելով թեմատիկ ֆիլմեր: Միջոցառումն կազմակերպվեց ՄՅԵՓՄ ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ եւ «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի» համաֆինանսավորմամբ:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան գրասենյակ Կոնրակտային անձ՝ Նարինե Քեզիրգանյան
Երեւան 0023, Ազաթանգեղոսի 2ա, 2-րդ հարկ, հեռ.՝ (010) 56-23-35, (093) 25-62-25, էլ. փոստ՝ narine.bezirganyan@savethechildren.org

Նրանք զգվելու աստիճան գործածված են

ԱՐՁԱՍԱՆՔ

Հաղթեցինք... Անկախ ենք... Ազատ ենք... Իմ հողում, իմ հայրենիքում զավակներին համար սկսել էի տուն կառուցել, գարնանը տնկիներ էի տնկել... Բոլորին հորդորում էի լավատես լինել... Իսկ հիմա... Ո՛ժ չունեն անգամ զավակների աչքերին նայելու:

Իմ քաղաքում եղե՞ն արեցին... Մանկուրտի սամաստությանը Մաքսիմ Հակոբյանը սպանեց հազարավոր կապանցիների հավատը, իմ հավատը: Թուրքի մահ... ամսպատեւի, գիշերով, թաքուն... Երեւոյթն ինձ համար անտանելի է: Մտածում եմ հեռանալու մասին... Այս հոգեվիճակում ես չեմ կարող բարեկիրք լինել... Այ պուճուր մարդ, իմ Հնչեվիք թթվածին էլ եմ քեզ թողնում, որ այդ հիվանդագին ուղեղդ լուսավորվի ու հասկանաս, որ վերջին հաշվով բոլորս մահկանացու ենք... Արժեքներ կան, որ դու քո ահռելի փողերով էլ չես կարող գնել:

Քաղաքապետի ստիպեցին ինքնաբացարկի դիմում գրել: Զգիտեմ ինչպես կարողացան, մի քանի ժամ առաջ Արթուրը շատ վճռական էր: Թշնամին անգամ այսքան դիպուկ չէր լինի: Այս քայլով նրանք սպանեցին մեր հավատը, իմ հավատը: Իսկ հավատս այնքան խորն էր... Անհավատ մարդը դառնում է չար: Ես չարությամբ իմ երկրում չեմ ապրի... Ես կհեռանամ: Վերջին տխմարներն են նրանք, ովքեր իրենց ուժեղ են տեսնում՝ ուժեղների բացակայությամբ:

Ո՞նանց՝ ընտրությունները քաղաքականացնելու ջանքերը դատապարտված են: Այսօր Ա.Աթայանին աստարում են տարբեր գաղափարների, հայացքների տեղ մարդիկ: Դա նշանակում է, որ ես կարողացավ կանգնեցնել Կապանի հետընթացը: Կապանցին ընտրելու է առաջին գծում, Շուշիի գունարտակում, ամենաթեժ կետում կռված զինվոր: Կապանցին կրկին ընտրելու է իր քաղաքապետին, ընտրելու է իր քաղաքը շենացոնողին, կապանցին ունի բավականաչափ խելք, որպեսզի ինքնուրույն որոշում կայացնի: Գեներտիկայից խոսողներն էլ թող հասկանան, որ մենք երբեք չենք ընտրի կենսագրությամբ, խասիաթով, անատոմիայով սողացող տեսակ:

Ես գիտեմ, որ դու հոգնել ես տիրող բարեբեռից, որ դու այլեւս չես կարող հանդուրժել, երբ ամեն բույս ոտնահարվում է արժանապատվությունը: Դու հոգնել ես եւ դարձել անտարբեր: Այո՛, դու հոգնելու, հիասթափվելու շատ պատճառներ ունես, բայց՝ իրավունք չունես... Զե՛ս տեսնում, որ առանձին չկայացած մարդիկ քո վիճակն օգտագործում են իրենց փառանդության ծարավը հագեցնելու համար:

Նախընտրական Կապանում գորակոչ է: Զորակոչվում են նույնիսկ վաղուց զորացրվածները: Մարդկային այն խորդան, որ ակտիվանում է այս օրերին, արդեն սկսել է նախընտրական գրողները: Բայց դրանց էֆեկտն այն չի լինելու, նրանք զգվելու աստիճան գործածված են:

Նարինե Մովսիսյան, ֆեյսբուքի (Facebook) էջից

